

ԳԵՂԵԿԵՑ ԾԵՂԵԿ

ԼԵՋՎԻ ՕԲԵԿՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

ՆՈՐ ՄԵԹՈԴ

Լեզվական սպեկտր

Հայոց լեզվի պատմության իմ ուսումնասիրության ընթացքում, բացահայտելով լեզվի տարրեր փուլերի և տարրեր հեղինակների լեզվական առանձնահատկությունները՝ ես կանգնեցի այնպիսի դժվարությունների առաջ, երբ անհրաժեշտ էր որոշ, մինչ այդ ինձ անհայտ եղանակով, ակնառու կերպով, գրաֆիկորեն ցույց տալ այդ տարրերությունները և նրանց համադրությունը: Այդ տարրերությունները համադրաբար ցույց տալու անհրաժեշտությունը բխում էր նրանից, որ գոյություն չունեին գրաֆիկական որևէ եղանակ, որով հնարավոր լիներ դրսևորել լեզվի քերականական, հնչական, գրային և մի շարք այլ հատկանիշների աստիճանական զարգացումը, շարժումը:

Առանձին հեղինակների երկերին ծանոթ և որոշ չափով լեզվական հարցերին խելամուտ մարդիկ բնականաբար նկատում են այս կամ այն հեղինակին հատուկ լեզվական իրողությունները և ստանում որոշ ապավորություն, կազմում որոշ ազոտ պատկերացում սրա կամ նրա լեզվի ու ոճի առանձնահատկությունների մասին: Այդ առանձնահատկությունները երբեմն լինում են շատ բացահայտ և առաջին իսկ հայացքից նկատելի: Սակայն նրանք երբեմն լինում են ոչ այնքան սուր և անմիջապես աչքի ընկնող, ուստի և նրանց ճանաչումը պահանջում է որոշ հետազոտական մեթոդ ու անհրաժեշտ միջոցներ:

Այսպես օրինակ, «Հյուսիսափայլի» ժամանակ և նրանից անմիջապես հետո Արարատյանը, Նալբանդյանը, Շահազիզը և ուրիշները նկատել են լեզվական (ինչպես և ոճական) որոշ առանձնահատկություններ, որ ունեն Նազարյանը, Ներկայումս բոլորի համար, թեև աղոտ կերպով, պարզ է, ասենք, Թումանյանի լեզուն կամ ոճը: Նույնը կարելի է ասել մեր մի շարք այլ հեղինակների լեզվի վերաբերյալ: Սակայն մինչև այժմ հնարավոր չէ օրեկտիվ չափանիշներով ու գիտական անաչառությամբ ցույց տալ կամ ապացուցել, թե որն է, օրինակ, Հովհաննես Թումանյանի լեզվի առանձնահատկությունը, ինչ տարրեր կամ բազադրիշներ ունի նա, որ չափով է նա զրական, որ չափով բարբառային: Նույն երևույթին մենք հանդիպում ենք նաև Արովյանի լեզվի մասին արաահայաած կարծիքների մեջ, և վերջինիս հատկապես «Վերք» Հայաստանի» վեպի լեզվի մասին կարծիք հայանած մարդկանց, նույնիսկ մասնագետ-արովյանագետների տեսակետով, «Վերքի» լեզուն մաքուր բարբառային է, բուն քանաքեռցի գյուղացու լեզուն: Բայց ճիշտ են արդյոք այդ կարծիքները, համապատասխան

նմամ են նրանք իրականությանը, թե՛ ոչ, դժվար է ապացուցել առանց ունենալու անհրաժեշտ օրեկտիվ չափանիշներ:

Մեր գրականագետներից ոմանք Թումանյանի լեզուն համարում են բարբառ կամ բարբառային, մյուսները գրական օրինակելի լեզու, բայց դարձյալ առանց փաստերի կամ ապացույցների: Դատավոր լինել այս տարբեր ե երբեմն հակասական կարծիքների նկատմամբ, մանավանդ որ երկու կողմն էլ հաճախ ունեն որոշ կռիվներ: Հանձին սուբեկտիվ տպավորությունների և խաբուսիկ օրեկտիվ տվյալների, շատ դժվար է, եթե չասենք՝ անկարելի:

Այսպիսի տպավորություններ և հակասական մտքեր արաահայտելուն նպաստում է, օրինակ, այն հանգամանքը, որ Թումանյանը աւս, այդ, այն դերանունների փոխարեն գործածում է էս, էդ, էն և երբեմն տեղ է տալիս բարբառային (հաճախ պարսկա-թյուրքական ժողովրդական փոխառյալ) բառերին: Բայց փոխում են արդյոք դրանք Թումանյանի լեզուն, հասցընում են այն արդյոք բարբառի կամ բարբառային լեզվի մակարդակին, ահա այս ե այլ այսպիսի հարցեր ամեն բոպե կանգնում էին իմ առաջ, ե ես զգում էի, որ գիտության մեջ դեռևս չի մշակված նրանց պատասխանը գտնելու օրեկտիվ մեթոդ:

Վերցնենք, օրինակ, «Անուշի» մեկ քառաառողը.

«Ոյստն աղբյուրից ջուր է առել
կույս սափորով, լուռ ու մունջ,
Ոյստը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրո ծաղկեփունջ»:

Այս քառաառողի մեջ զուտ բարբառային է միայն «ոյստը բառը և ժողովրդական է լուռ ու մունջ արաահայտությունը: Իսկ դրանց կողքին առկա են զուտ գրական (նույնիսկ գրաբար) այնպիսի բառեր ու ձևեր, ինչպիսիք են՝ աղբյուր, կույս սափոր, սիրո, ծաղկեփունջ և այլն:

Արդ, բարբառային է արդյոք այս լեզուն կամ բարբառ, թե՛ գրական լեզու՝ որոշ ոճավորում ստացած: Եվ ինչն է իրոք բարբառի ու գրական լեզվի սահմանաբաժանումը կամ, եթե՝ ավելի հեռուն գնանք՝ որո՞նք են այն վճռական տարրերը, որ սահմանազատում են գրաբարը, միջին հայերենը, արևմտյան ու արևելյան գրական լեզուները և բարբառները իրարից:

Պարզ է, որ առանց այս հիմնական հարցերը լուծելու, հնարավոր չէր լինի որոշել մեր լեզվի զարգացումը, ցույց տալ ու գնահատել նրա տարբեր փուլերում և տարբեր հեղինակների երկերում նկատվող տեղաշարժները:

Իմ աշխատանքի ընթացքում բազմաթիվ անգամներ ես առիթ ունեցա զգալու այս հարցի պարզաբանման անհրաժեշտությունը և, դեռևս գիտական որոշակի մեթոդ չունենալու իսկ պայմաններում, եկա այն եզրակացության, որ կարելի է լեզվալիան-քերականական, հնչական, ուղղագրական և այլ որոշ քանակի հատկանիշներ ընտրելով՝ գծել գրաբարի, միջին հայերենի, արևմտյան ու արևելյան գրական լեզուների սահմանը:

Ահա մի համադրական տախտակ, որ ես ինձ համար կազմել էի տարիներ առաջ և որ երկար ժամանակ օգտագործում էի իբրև աշխատանքային մեթոդ:

	Գրություն	Միջին հայերեն	Անհատական գրական լեզու	Անհայտական գրական լեզու
1	Հոգնակի կազմել	-անի, -առան, -աթ, -եր	-եր, -ներ	-եր, -ներ
2	Տառնել	և այլն առան(ա, յ)երեր	առան(ա, յ)երեր	առան(ա, յ)երեր
3	Ներկա	կուրբիմ, կուրամ	կուրբիմ, կուրամ	կուրբիմ, կուրամ
4	Անցյալ դերք	գրեալ, գրեալ	գրեալ, գրեալ	գրեալ, գրեալ
5	Հոգնակի սեռականի վերջ	-ի, -ու, -ա	-եր, -ներ	-եր, -ներ
6	Եղանակի որոշյալ սեռականի վերջ	-ի, -ու, -ա այլն	-ի, -ու, -ա այլն	-ի, -ու, -ա այլն
7	Հայցական	դ՝ապրիս	համար ապրիս	հարկառ շուքիս
8	Քաջատականի վերջ	-ի	-ի (էն)	-ի
9	Ներգոյական	շուքի	շուքի	շուքի
10	Սովորական	ի, ու	սովորական ի, ու, ո	սովորական ի, ո, ո
11	Անոթ անունով հայցական	շուքի	շուքի	շուքի

Այն ժամանակ ինձ թվում էր, թե այս բաղադրիչները կարող էին դառնալ լեզվի նկարագրության օրեկտիվ ցուցիչներ՝ անհրաժեշտ դեպքում հարստանալով լրացուցիչ բաղադրիչներով (հնչական, ուղղագրական, քերականական և այլն)։

Նման աիպի որոնումներ կատարելու ընթացքում պատահաբար ծանոթացա ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ Նիկոլայ Մորոզովի «Христос» ընդհանուր անունը կրող բաղմահառոր աշխատու-

թյան երրորդ հատորին՝ „Бог и слово“ ենթավերնադրով, որի մեջ ուրախությամբ գտա մի գլուխ՝ նվիրված հեղինակային լեզվի ուսումնասիրությանը «լեզվական սպեկտր» անունով:

Այդ սպեկտրը հենված է որոշ բառերի (ավելի ճիշտ՝ բառիկների) գործածության հաճախականության վրա և տալիս է տարբեր հեղինակների, այսպես կոչված, լեզվական սպեկտրը գրաֆիկ կերպով:

Անհետաքրքրական չի լինի պարզել այն եղանակները, որոնցով վերահիշյալ գիտնականն ուսումնասիրում է հեղինակների լեզուն:

Նա վերցնում է, օրինակ, ռուսերեն В, НА, С նախդիրները և հաշվում, թե հազար բառի մեջ քանի անգամ են գործածվում նրանք նույն հեղինակի աարբեր երկերում և աարբեր հեղինակների երկերում: Մորոգովը հաշվել է, որ այդ նախդիրները հազար բառի մեջ հետևյալ հաճախականությամբ ունեն ստորև նշված երկերում:

	В	НА	С
„Майская ночь“	— 15	24	11
„Страшная месть“	— 16	26	13
„Тарас Бульба“	— 23	26	15
„Капитанская дочка“	— 32	11	8

Նույն մեթոդով տաս երկից հանած հազարականի (промили) տվյալները գումարելով և ապա այդ գումարները բաժանելով տասի՝ նա ստացել է յուրաքանչյուր նախդրի հաճախականության մոտավոր միջին հայտարար հազարականից, որ է՝ В-ի համար՝ $258:10 = 26$, НА-ի համար՝ $198:10 = 20$, С-ի համար՝ $110:10 = 11$:

Դրանից հետո իր ստացած արդյունքը րնդհանուր հայտարարի բերելու նպատակով, յուրաքանչյուր կոնկրետ հազարականը բաժանելով մոտավոր միջին հայտարարին՝ Մորոգովն ստացել է հետևյալ րնդհանուր հայտարարները, օրինակ, В նախդրի համար:


„Майская ночь“	— $15:26 = 0,58$
„Капитанская дочка“	— $32:26 = 1,2$
„Тарас Бульба“	— $23:26 = 0,9$ և այլն:

Նույն եղանակով նա ստացել է ընդհանուր հայտարարները НА և С նախդիրների համար ևս:

Ապա գիտնականը կազմել է գծագրի սխեմա՝ մեջաբան ընդունելով մեկ ամրողը, իսկ նրանից վերև և նրանից ներքև՝ տասնորդականների աճումը և նվազումը:

Սխեմայի տակ նա նշել է իր քննած երեք նախդիրները և առնելով այդ նախդիրների հաճախականության ընդհանուր հայտարարների երեք կետերը՝ դրանք իրար է միացրել համապատասխան գծերով ու ստացել իր որոնած սպեկտրը, ասենք՝ Գոգոլի, Պուշկինի և այլն, որից մեկ օրինակ տալիս եմ ստորև:¹

¹ Н. Морозов—Христос, т. III, Бог и слово, էջ 124.



Մորոգովը այս ձևով կազմել է Պուշկինի, Գոգոլի և այլ հեղինակների լեզվական սպեկտրները, որոնք դարձան այդ կերպով նման են սաացվում նույն հեղինակների տարբեր երկերից, բայց շատ տարբեր՝ ուրիշ հեղինակների լեզվական սպեկտրների համեմատությամբ, և այդ այն աստիճանի, որ Մորոգովը նույնիսկ համարձակորեն պնդում է, թե կարելի է այս լեզվական սպեկտրով որոշել անհայտ հեղինակների երկերի հեղինակային պատկանելությունը, ինչպես և որոշել այս կամ այն հեղինակին վերագրվող երկերի ճիշտ պատկանելությունը:

Այն ժամանակ ինձ համար այնքան դալժակ էր հղի սպեկտրային վերլուծման այս մեթոդը, որ ես էլ սկսեցի այդ ձևով կատարել Նադարյանի, Նալբանդյանի, Աբովյանի, Թումանյանի, Բահակյանի լեզվի ուսումնասիրությունը: Մակայն հետազոտում դադարեցի, որ այդ մեթոդը նպատակահարմար չէ կիրառել գործնականորեն, հենց թեկուզ այն պատճառով, որ բավական մեխանիկական է և պարզում է ավելի շուտ այս կամ այն հեղինակի ոճի որոշ հարցերը, քան թե լեզուն: Ուստի հրաժարվելով այս մեթոդից, բայց ե առաջնորդվելով նրա նպատակային ուղղությամբ՝ ես վերջիվերջո եկա այն եզրակացության, որ կարելի և հարկավոր է հորինել լեզվական ուսումնասիրության մի նոր սպեկտր՝ հենվելով հնչական-ուղղագրական և քերականական հիմնական, բնորոշ տարրերի վրա:

Հրաժարվելով Մորոգովի լեզվի սպեկտրը կիրառելու մտքից՝ այնուհետև ես որոնումներ կատարեցի գտնելու համար լեզվական կենդանի, արահայտիչ այնպիսի բաղադրիչներ, որոնցով հնարավոր կլիներ տարբերել, ասենք, Նադարյանի, Պատկանյանի, Թումանյանի, Բահակյանի, Նալբանդյանի լեզվական առանձնահատկությունները: Այս աշխատանքի ընթացքում ինձ համար պարզվեց նաև այն, որ Մորոգովի սպեկտրն ավելի շուտ հեղինակների անհատական ոճի ուսումնասիրությանն է նպաստում, քան թե հեղինակների քերականական լեզվի:

Վերջիվերջո ես կանգ առա հնչական-ուղղագրական, բառապաշարային և թեքական 48 բաղադրիչի վրա, որոնցից յուրաքանչյուրը առանձին երանգ է տալիս մեր լեզվին: Այսպես օրինակ, հենց այն խոդիքը, որ հոգի է. Թումանյանը այնքան խոսակցության նյութ է տվել իր գրական լեզվի մեջ ևս ու եմ-ը թայս ու այն-ի փոխարեն գործածելով՝ նշում է, որ այս երևույթը կարող է համարվել լեզվական վստահելի բաղադրիչ: Վերջնենք ուրիշ օրինակ. եայր, լույս. Լրկու, ոսկի բառերի հեր, լիս, Էրկու, օսկի ձևերը գործածելը նույնպես հանդիսանում է հատկանշական աշխարհաբարի պատմության մեջ այս կամ այն հեղինակի լեզվի համար: Զուտ

քերականական ձևերից կարելի է հիշառակել «ե» օժանդակ բայի փոխարեն «ա» գործածելը կամ կրավորականի գրվեց, քափվեց ձևերի փոխարեն տրվեցավ, քափվեցավ ձևերին հարելը և այլն:

Ահա, լեզվի համար բնորոշ հանդիսացող այսպիսի ուժ են պարունակում այն բաղադրիչները, որոնց վրա ես կանգ առա լեզվական սպեկար հորինելու համար: Որ այդ բաղադրիչներն իրոք դրսևորում են մեր լեզվի պատմության տարբեր փուլերի ներկայացուցիչ հանդիսացող հեղինակների լեզվական առանձնահատկությունները, կարելի է համոզվել ստորև բերված հատվածի չորս տարբերակների ընթերցումով, որոնց մեջ կիրառված են այդ բաղադրիչներից մի քանիսը միայն: Առաջին իսկ ընթերցանության տպավորության տակ յուրաքանչյուր անձնավորություն, որ ունի լեզվի որոշ ճաշակ և ծանոթ է մեր անվանի հեղինակների երկերին, հեշտությամբ կկարողանա որոշել, թե այդ հատվածներից որն է հյուսիսափայլյան, որը արովյանական, որը՝ թումանյանական և որը՝ մաքուր գրական: Ահա այդ տարբերակները.

1. «Մի մարդ հրապարակով անցնելիս տեսնում է, որ իր հարևանի աղան երկու զառ է տանում. երեխան ձեռքին մի բուռ խոտ ունի և երկու մատով պինդ ձգում է մեծ դառան վզից կապած պարանը: Խեղճ կենդանիները բառաչելով վաղում են երեխայի ետևից:

Այդ ժամանակ մոտիկ փողոցից մի սայլ է դուրս գալիս և մարդը նկատում է, որ աղան շղկվեց և քիչ մնաց սայլի տակ ընկնի»:

2. «Մեկ մարդ հրապարակով անցանելիս տեսնում է, որ յուրյան հարևանի տղայն երկու զառն է տանում. երեխայն ձեռքի մեջ մեկ բուռն խոտ ունի և երկու մատով պինդ ձգում է մեծ գառան վզից կապած պարանը: Խեղճ կենդանիքը բառաչելով վաղում են նորա քամակիցը:

Այդ ժամին մոտիկ փողոցիցն մեկ սայլ է դուրս գալիս և մարդը նկատում է, որ տղայն շղկվեցավ և քիչ մնաց սայլի տակն անկանե»:

3. «Մի մարդ մեյդանով անցկենալիս տեսնում ա, որ իրան հարևանի աղեն երկու զառն ա տանում. երեխեն ձեռքի միջին մի բուռն խոտ ունի և երկու մատով պինդ քաշում ա մեծ գառի բողաղիցը կապած թոկը: Խեղճ կենդանիքը բղավելով վաղ են տալիս նրա քամակիցը:

Էդ սհաթին մոդիկ քուչիցը մի արաբա ա դուրս գալիս և մարդը նկատում ա, որ աղեն շղկվեցավ ու քիչ մնաց արաբի տակին ընկնի»:

4. «Մի մարդ հրապարակով անցնելիս տեսնում է, որ իր հարևանի աղան երկու զառ է տանում. երեխեն ձեռքի մեջ մի բուռ խոտ ունի և երկու մատով պինդ ձգում է դառան վզիցը կապած թոկը: Խեղճ կենդանիքը բառաչելով վաղում են երեխի հետևիցը:

Էդ ժամանակ մոտիկ փողոցիցը մի սել է դուրս գալի և մարդը նկատում է, որ աղեն շղկվեց և քիչ մնաց սելի տակն ընկնի»:

Կարծում եմ, որ ավելորդ է ծանոթություն տալ, թե այս չորս հատվածներից որը մեր ծանոթ հեղինակներից որի լեզվի «պարողիան» է: Նվ եթե միայն մի քանի բաղադրիչների գործածությունը այսքան պարզ կերպով մեղ ցույց է տալիս հեղինակների լեզվի տարբերությունը, միանգամայն ակնհայտ է, որ մեր ընտրած 48 բաղադրիչները միասին առած միանգամայն բավական են լուծելու համար մեզ հետաքրքրող հարցերը: Այս բա-

դադարեցնելով ընդունված կառավարման և հաշվի առնելով մեզ համար անառարկելի հետևյալ գրությունները.

1. Մեր գրական աշխարհաբարը, որ մենք այս աշխատության մեջ ուղղակի կոչում ենք նաև աշխարհաբար, հանդիսանում է գրաբարի և բարբառների պատմական դասի վրա կառուցված մի համադիջական (կոմպրոմիսային), համադրական լեզու, որի նյութական, մատերիական ինվենտարը առնված է գրաբարից, իսկ բովանդակային և քերականական կոդը բարբառներից (ժողովրդից): Այսպիսով, աշխարհաբարի մարմինը գրաբարյան է, իսկ հոգին կամ ոգին՝ ժողովրդական:

2. Աշխարհաբարը իր գոյությունն առել է 17-րդ դարից և մինչև մեր օրերը ունեցել է զարգացման մի շարք փուլեր՝ յուրաքանչյուրը յուր լեզվական տարբերիչ առանձնահատկություններով:

3. Աշխարհաբարի մեջ չմերված և 19-րդ դարի վերջերում ու 20-րդ դարի սկզբներում ընդհանուրի կոդից չընդունված լեզվական տարրերը դիտվում են իբրև խորթ տարրեր, անկախ այն բանից, թե որ աղբյուրից են գալիս դրանք (գրաբարից, թե բարբառից):

4. Թե գրաբարից և թե բարբառից աշխարհաբարին անցած տարրերը հավասարաչափ հարազատ և գրական ենք համարում, եթե ընդհանուրի կոդից ընդունված են և դպրոցական, գրական տարածման արժանացած այդ նույն ժամանակ:

Անցնում եմ իմ լեզվական սպեկտրի բաղադրիչների դրային պայմանական նշանների բացատրությանը:

Գրաբարից աշխարհաբարին անցած և ընդհանուրի կոդից ընդունված տարրերը նշում եմ մեկ հորիզոնական գծով (—) և հետագայում կոչելու եմ դասական:

Բարբառից աշխարհաբարին անցած և ընդհանուրի կոդից ընդունված լեզվական տարրերը նշում եմ մեկ ալիքաձև գծով (~~) և հետագայում կոչելու եմ ժողովրդական:

Բարբառային այն տարրերը (այդ թվում նաև արևմտյան դրական լեզվից և միջին հայերենից), որոնք չեն անցել մեր դրական լեզվին, նշում եմ երկու ալիքաձև գծով (≡), և հետագայում կոչելու եմ բարբառային:

Գրաբարյան այն տարրերը (այդ թվում նաև գրաբարով ոճավորված բարբառային տարրերը), որոնք չեն ընդունված գրական լեզվի մեջ, նշում եմ երկու հորիզոնական գծով (=) և հետագայում կոչելու եմ գրաբար:

Եթե միևնույն լեզվական բաղադրիչը մեր լեզվի պատմության որոշ շրջանում անկայուն է և տատանվում է գրաբարի, դասականի, ժողովրդականի ու բարբառայինի միջև, ես նշում եմ խառն սպեկտրով՝ այսպես 1 — 2 ~~, 3 — = և այլն: Սրանցից առաջինը ցույց է տալիս, որ բաղադրիչն անկայուն է և տատանվում է դասական ու ժողովրդական ձևերի միջև: Զեկերից երկրորդը ցույց է տալիս, որ բաղադրիչը նույնպես անկայուն է, բայց տատանվում է գրաբարի ու ժողովրդականի միջև: Երրորդը ցույց է տալիս, որ բաղադրիչն անկայուն է և տատանվում է դասականի ու բարբառայինի միջև:

Այսպես օրինակ, խառնատեսակի լեզվային իր ձևախառնվողի մեջ իբրև օժանդակ բայ գործածում է մերթ Եւ, մերթ Է՛ւ, պարզ է, որ նրա լեզ-

վի մեջ ոժանդակ բայի եղակի երրորդ դեմքի բաղադրիչը պետք է նշվի իբրև խառն ($-\infty$), այսինքն՝ դասակառն և բարբառային։ Նաղարյանը և Նալբանդյանն իբրև հոգնակիի վերջավորութուն համասարապես գործածում են և՛ գրաբարյան քան -ն, և՛ ժողովրդական եքն ու եներն ։ Ուարդ է, որ նրանց լեզվական սպեկտրի մեջ հոգնակի ցույց տվող բաղադրիչը պետք է լինի խառն ($=\sim$), այսինքն գրաբար և ժողովրդական։

Այսպիսով, այս սպեկտրի բաղադրիչներն ականառու կերպով ցույց են տալիս լեզվական յուրաքանչյուր երևույթի և՛ ծագումը (գրաբարից, թե բարբառներից), և՛ կայունութունն ու անկայունութունը, և իրենց համադրության մեջ վերջին հաշվով նշում յուրաքանչյուր հեղինակի լեզվի բնույթը՝ դարձյալ ականառու կերպով։

Այժմ անցնում եմ լեզվական սպեկտրի բաղադրիչների շարադրմանը։

Լեզվական սպեկտրի բաղադրիչները

1. Հ ն չ ա կ ա ն – ու ղ ղ ա գ ռ ա կ ա ն

Աշխարհաբար	Դրաբար	Բարբառ
(Սպեկտրային նշանը՝ — կամ $\sim$)	(Սպեկտրային նշանը՝ =)	(Սպեկտրային նշանը՝ $\approx$)
1. Հայր, լույս նյութ	հայր, լոյս, նիւթ	հէր, լիս լուս, նութ
2. Երկու, օսկի	երկու, օսկի	էրկու, օսկի
3. Տղան, ծառան	տղայն, ծառայն	տղեն, ծառեն
4. Բաղաքի	քաղաքի	քաղքի, քաղկի
5. Ձաղ, երբ, կարգալ	ձագ, երբ, կարգալ	ձաք, երփ, կարթալ
6. Մարդ է, գրում էր	մարդ է, գրէր	մարթ ա, գրում էր
7. Դեպի, իդուր	դէպ ի, ի դուր	դրա, դուր
8. Բառ, հարս, ուսում	գառն, հարսն, ուսումն	գառ, հարս, ուսում, զառը, հարսը

2. Բ ա ո ե ռ և բ ա ո ա ձ ն ե ռ

9. Հրապարակ, փողոց, եզր	հրապարակ, փողոց, եզր	մեյդան, քուչա, դրադ
10. Դասարան, հրաբուխ, նավակ	դասարան, հրաբուխ, նավակ	կլաս, վուլկան, լոթկա
11. Այս, այդ, այն	այս, այդ, այն	էս, էդ էա, էն
12. Եռ, իր, յուր	քոյ, իւր, իւրեան	քու, իրա, իրան
13. Մեջ, տակ, մոտ	ի միջի, ընդ, մօտ, առ	մեջը, տակը, մեջին, տակին, մօտը, մոաին
14. Մենք	մեք	մենք
15. Սրա, սրանք, վրա	սորայ, սոքայ, վերայ	սրա, սրանք, վրա, ըստուր, ըստոնք
16. Պեւք է, պիտի	պիտոյ է	պպի, պետքա, պետմա

3. Հոլովում

17. Տղայի, երեխայի	տղայի, երեխայի	տղի, երեխի, երեխու
18. Արյան, ընկերու-	արեան, ընկերութեան	արնի, ընկերութենի
19. Կնոջ, մահվան,	կնոջ, մահուան, քրոջ	կնկա կնգա, մահի, քվոր
20. Արյամբ, ընկե-	արեամբ, ընկերու-	արնով, ընկերութենով
21. Այս քարից, քա-	այս քարիւ, քարին	այս քարիցը, քարովը,
22. Վաստակներ, ճա-	վաստակք, ճառք	վաստակներ, ճառեր
23. Չգացմունքներ,	ղգացմունք, նախա-	ղգացմունքներ, նա-
24. Գործերի, մեղ-	գործոց, մեղաց	խատինքներ
25. Գնալու, ձիու	գնալոյ, ձիոյ	գործերի, մեղքերի,
26. Հայց, աշակերտ,	աշակերտ, դաշակերտ	գործերու
27. Բացառ, քարից,	քարէ	գնալու, ձիու (ձիան)
28. Գործ, ահալ, սե-	ահիւ, սեղանաւ	աշակերտ, աշակեր-
29. Երբ, քարում,	(չունի)	տին
30. Մի մարդ, մեկ	մարդ մի, այլ մի	քարից, գինուց
31. Քարը, քարն	քարն,	ահով, սեղանով
32. Քարը, քարդ (=	(= այս, այդ)	քարում, ջրում
իմ, քո)		մի մարդ, մեկ մարդ
		(մե մարդ, մին
		մարդ)
		քարը, քարն
		(— իմ, քո)

4. Բայ և խոնարհում

33. Եմ, ես, են	եմ, ես, են	եմ, ես, են, ամ, աս,
34. Է	է	ան (իմ, իս)
35. Էի, էիր, էինք	էի, էիր, էաք	ա (Թքիւ, բարբ, է)
36. Ենք	եմք	էի, էիր, էինք (ի, իր,
37. Տեսնել, հասնել	տեսանել, հասանիլ	ինք)
38. Առնել, անել	առնուիլ, առնել	ենք (անք)
39. Վաղել, թողնել,	վաղիլ, թողնիլ, հասա-	տեսնել, հասնել (տես-
հասնել	նիլ	նալ, հասնիլ)
		առնել, անել
		վաղել, թողնել, վա-
		ղիլ, թողնալ, հաս-
		նիլ

40. Գրվել, -վեցի, -վեց -վեց	գրիլ, -եցալ, -եցալ -վեց	գրվել, -վեցի, -վեց, գրվիլ, -վեցա, -վե- ցավ
41. Փախցնել, փախցը- րեց	փախուցանել, փա- խոյց	փախցնել, փախցրեց (փախցրուց)
42. Գնում, գալիս	(չունի)	գնում, գալիս (գնա- ման, գալի)
43. Տեսել	տեսնալ	տեսել (տեսն, տե- սեր)
44. Տեսած	(չունի)	տեսած (տեսուկ)
45. Զի գրի, խաղա, չի գրիլ, խաղալ	ոչ գրէ, խաղայ	չի գրի, խաղա (գրիլ չի, խաղալ չի)
46. Եթե գրի, ասի	եթէ գրէ, ասէ	եթե գրի, ասի
47. Զգրեց, չտան, չխոսես և այլն	ոչ գրեաց, ոչ տան և այլն	չի գրեց, չի տան, չի խոսես և այլն
48. Զի խոսում, չի գրել	ոչ խօսէ, ոչ է գրեալ, չէ գրել	չի խոսում, չի գրել

Ինչպես պարզ երևում է վերևում բերված թվարկությունից, մեր ընտրած բաղադրիչները հանդիսանում են տիպական ու տարբերիչ՝ ընդ-գրկելով լեզվի հնչական-ուղղագրական, բառապաշարային ու բառաձևային և հոլովման ու խոնարհման ձևերը, առանց շոշափելու զուտ ոճական երե-վույթներ:

Այժմ քննենք առանձին-առանձին գրաբարի, բարբառների և աշ-խարհաբարի սպեկտրները:

1. Գրաբարի սպեկտրը միատարր է և բոլոր բաղադրիչներն արտա-հայտված են զույգ հոբիզոնական զծով (—):

2. Բարբառների սպեկտրը նույնպես միատարր է և արտահայտված զույգ ալիքային զծով (≡):

3. Աշխարհաբարի սպեկտրը տարբերվում է նախորդ երկուսից նրա-նով, որ սրա բաղադրիչների գծերը զույգ չեն և միատարր չեն: Աշխարհա-բարի վերաբերյալ միաժամանակ պետք է նշել, որ բաղադրիչների մի մա-սը դասական է, այսինքն գալիս է գրաբարից և դրաֆիկորեն արտաշայ-տում է իր սխտեմը նրանով, որ նշված է հորիզոնական զծով (բայց ի տար-բերություն գրաբարից՝ մեկ զծով), իսկ մյուս մասը ժողովրդական է, ակ-նարկում է իր ծագումը բարբառներից և նշված է ալիքաձև զծով (բայց ի տարբերություն բարբառից՝ մեկ զծով):

Աշխարհաբարն ունի 18 դասական և 30 ժողովրդական բաղադրիչ: Այսպիսով նրա բոլոր 48 բաղադրիչներն էլ գրական են: Եթե վերցնենք օրինակի համար «Հյուսիսափայլի» լեզուն, կտեսնենք, որ նրա մեջ 14 բա-ղադրիչ դասական է, 11-ը՝ ժողովրդական, 11-ը՝ գրաբար և 12-ը՝ խառն: «Հյուսիսափայլի» լեզուն էապես տարբերվում է ժամանակակից գրական լեզվից 17 բաղադրիչով, գլխավորաբար հոգուտ գրաբարի. եթե վերցնենք Արովյանի լեզուն, կտեսնենք, որ նա ունի 4 դասական բաղադրիչ, 20 ժո-ղովրդական, 11 բարբառային և 13 խառն բաղադրիչ: Էապես Արովյա-

Համագումարական տախտակ լեզվական սպեկտրների տվյալների

	Մացուր բաղադր				Խառն բաղադրիչներ				Բաղադրիչների հանրագումարը				Շեղումներ դրակ. աշխ. իջ				Գրակ. բաղադր				Բաղադրիչների տեղաշարժները						
	Ֆրաբանյան	Դասական	Բաբուս	Փոլոնի	Լեզվական	Ֆրաբ.	Դասական	Բաբուս	Փոլոնի	Ֆրաբանյան	Դասական	Բաբուս	Փոլոնի	Լեզվական	Ֆրաբանյան	Դասական	Բաբուս	Փոլոնի	XV—XVI դարեր	Արդյուն	Հեղուկափ.	Բաբուս	Փոլոնի	Լեզվական	Ֆրաբանյան		
XVII—XVIII դարեր	5	6	4	6	27	7½	4½	5½	9½	12½	10½	9½	15½	22	12½	9½	7½	14½	25½	10½	15½						
Արդյուն	0	4	11	21	12		2½	5½	3½	½	6½	16½	24½	17	½	16½	11½	5½	9½	6½	24½						
Հեղուկափ.	11	14	0	11	12	3	1½	3	4½	14	15½	3	15½	17	14	3	2½	14½	31	16½	15½						
Բաբուս	0	14	0	18	16	5	2	3	6	5	16	3	24	8	5	3	2	6	40	16	24						
Բաբուսյան	0	7	2	27	12	0	4½	6	1½	0	11½	8	28½	8	0	8	6½	1½	40	11½	28½						
Դար-Դուր	0	18	0	30	0	0	0	0	0	0	18	0	30	0	0	0	0	0	48	18	30						
Գրաբանյան																						12½	1½	14	5	0	0
Դասական																						10½	6½	15½	16	11½	18
Բաբուսյան																						9½	16½	3	3	8	0
Փոլոնիական																						15½	24½	15½	24	28½	30

նի լեզուն ևս տարրերվում է մեր Եզրական լեզվից 17 բաղադրիչով՝ հոգուտ գլխավորաբար բարբառների. իսկ եթե քննենք Ռաֆֆու լեզուն, կանանենք, որ սա ունի 14 դասական, 18 ժողովրդական և միայն 16 խառն բաղադրիչ, հոգուտ գրաբարի, ժողովրդականի և բարբառայինի:

Ստորև բերվում են անհրաժեշտ համադրական տախտակներ, որոնց մեջ արված է լեզվական ոպեկարի տվյալների վերլուծումը: Բոլոր ամփոփում լեզվական սպեկտրի տվյալների, սաորե տալիս ենք նաև մեր լեզվի պատմության տարբեր փուլերի և տիպական որոշիչ լեզվաառանձնահատկություններ ունեցող հեղինակների լեզվական սպեկտրի համադրական տախտակը:

ՔՐՈՂՐԴԱԿԱՆ, ԲՈՐԲՈՒՅՈՆ, ԳՐԱԲԱՐՅԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՆ
ՏԱՐՐԵՐԻ ՑԵՂԱՇԱՐՔՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԲԱՐԻ ՄԵՑ
ԸՄՑ ԼԵԶԱԿԱՆ ՍԴԵՎՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ

